

րութիւն։ Այս ընկերութիւնը հրատիրում է Հեղինակաւոր անձանց դասեր կարդալու իրենց վիտութիւններից զանազան քաղաքներում։ Այս դասախոսութիւններն այնքան սիրելի են, որ երբեմն մինչև 7000 անձնոր են ժողովում որ և է զիտականի լսելու համար։

\*\*\*

## Մ. Մ. Ա. Ը. Ը. Տ. Ը. Ը.

(Պատկերներ Եկրակի զիտական կեանքից)։

Թէ ինչ վաղմ, ինչ աստղի տակ ու ինչ տեղ եմ մօրէս աշխարհ էկէ՝ եղ չխեմի հմա էպանն է միտս որ, հլա նոր մէքիշմ խելքս կարմ էր, նոր աջ ձեռս ձախէս ջկմ էր, որ մեր տնեցիք ընձի խարստմ էին ու գրէս ծիծաղմ։ Մէկն ըսմ էր թէ՝ Յակոյին գոմշի թրքի միջէն ենք դաէ, մէկէլլ թէ՝ պատի ծակէն ենք հանէ, են մէկէլլ թէ—չէ, Յակոյին մէ բօշի ձեռսէ ենք առէ, երբոր բօշէն խուրջնի մէջը քցած, իշու վիէն դրած ման էր ածմ տները, Նըմի թէ բդոնցէն վերն է զորդ թող իրանք դան ջուղար տան, մէննակ բանն ես է որ, են վաղմը եղ խօսքերուն հաւատմ էր ու ես ընձի ընձի լալմ, ծեծկում ու ըսմ, չեմ ընչի են ընձի գոմշի թրքի միջէն դաէ, ես պատի ծկէն հանէ, ես թէ չէ բօշէցէն առէ, որ հմի ըսմ ու գրէս ծրծաղմ են։ Շատ որ լալմ ու ծեծկում էր, նոր մամ սկսմ էր զուրգուրել ու ըսել. քա զուրբանդ էղնիմ, Յափ ջան, ըդովք քուլի սուտ խօրաթայ են, խօսիդ են ըսմ, որ գու լաս, իրանք վրէդ ծրծաղնին Խօսիդ են ու լալման բաներու հաւատմ ես։ Սաքն է պատի ծկէն ելած, խօ գու չես, գու մեր տղէն ես, Ձենդ կորէ, քեզի փօփօլ պըտի առնիմ, խէտ դուրսայ պըտի գործեմ։ չանթայ պըտի կարեմ ու ես ինչ դիտեմ ես տեսակ հաղար ու մէ բանով խարիսքում ձենս կորում էր, հմա ոնչ փօփօլ կար, ոնչ գուլրայ, ոնչ էլ չանթայ։

Քաղի բաղի միթթարւում էր էն մտքով, որ էղ խօսքերը Ապօյին էլ էին ըսմ, հմա շատ էլ որ լալմ էր, արդդ աչ էին տալմ, Մէկն ըսմ էր, «Սնէւ, թէ չէ բօրուը դուան յետեն է, կուգայ, կուտէ քեզի», մէկէլլ թէ՝ տօ, մարդադէլն էկէլ է երթիկը, լալկան տղայ է ման գալմ, որ տանի ուտէ, էն մէկէլլ թէ՝ «քու տունդ շինուի մարդագնիք պետք ու գուշակ առնիմ, որ մասն առնեն ծոցերը, գուրդ պըտի առնիմ, ձենս կարելին»։

բերան կայ, Անկանջը զրել է ձիթհանքի խօշտի վրայ ու գետնէն ձեն է քաշմ, ում անէն որ մատղչի լացի ձեն է զալմ, էրթմ, առնմ ուտմ է լալկան տղինն, Ըգոնց ահօւն էլ չէ կրմն բանձր լալ, ձեն փառս էր քցմ ու հեկեկմ հեկեկմ մընում, Ձենս կորելուն պէս մամս ջուխտ ձեռով ծափ էր զարկմ, երթիկն աշմ ու հետն ըսմ, «Եհան ակէչ, անտէր իծանը էրանը էրթիկը, լալմ է, փախան, գնացին իծանը», Հմա որ թարգրմ էր լացս, ըսմ էր, «Ե՛յ, անտէր իծան, էլի էկան երթիկը»։

Հա զօրուայ բանը երթայ ու գայ, զոռ ու ջանլամ, ինչ էղնմ էղնմ էր, ինչ ըսմ ըսմ էին, անցնում, երթում էր, հմա զիշերները ընձի հըմար անտանելի էր, Այսէ թէ ճրագը վառէր, թառթը գրուէր, էլ ոնչ տնէն ողայ ու ոնչ էլ ողեցէն տուն կրնայի երթայ առանց մարդու փէշ բռնելու եա զիրկ ելնելու, Եանի կէնէի թէ ողեցէն մէննակ տուն գամ, հմա սազգէն կիջնէի, գատարի քովի կուգայի, որ աչքս չէր լնիսի մուում տեղը, ես կիւմանայի թէ էս է՝ բօրուն ու մարդագէլլ ըգեղ են, ընձի պըտի բռնեն, Էն սհամը թողնէի ու ճվճիան լով յետ փախնէի կը, Թէ որ ողէն էլ մարդ չէր էղնի, ես պտի էնքան ճվճայի, լայի, որ Ենս իմանային, անէն գային տանէին, ես թէ չէ մէ չուլմ պըտի քաշէի գրէս, զլուխս ծածկէի, սուլուզ մոլուզս ընձի քաշէի, քրոնքի մէջ էնքան դողայի որ, ինչարի մէկը զար ողէն, հետը երթայի տուն, Տունն էլ որ, թէ մէ քիշմ՝ չէլլիկը քիշմ, Ճենար կը մասնականայի, անկջներս կը խժիսային, աչքերս ալլադ մալլադ կէնէի ու զիտէի թէ էս է՝ պատերու ծըկէն, քեօչէբէն գեկը ու սատանէք դուս պըտի թարփին ընձի բռնեն, Գիշերները ճրագներն որ կանցնէին, պարկէին կը քնելու, էլ իմ քունս չէր տանի, Մութ տեղը աչքիս կէրեւային տեսակ տեսակ օձեր, բերանները բացած, լեղունները գու քցած, փողիկ, կոտոչով ու պոչով ստանէք, ընտից եանի կուգար օխտը զլիսանի գել բերանը բացած, լեղուն գուս քցած ու կը մատենար ընձի, որ ուտէ, արդդ կը բօրուայի, ճվճայի ու տեղիս մէջը քացի քացի էնէի կը, Ձենիս տնեցիք զարթնէին, ճրագ կէնէին որ, ոնչ օձ, ոնչ սատանայ, ոնչ գե, ես ընձի ընձի ճվճայում ու տեղիս մէջը նօրդնիս քացուում եմ, Արդդ լայի ու ծեծկուէի կը ենքան որ, ինչարի պատի ու մամս առնեն ծոցերը, գուրդ գուրէին, ձենս կարելին»։

Երբոր էս տեսակ մէ քանի իրկուն թարգեցի ճվճայու ու լացս, նոր մամս զլիսու ընկաւ,

«Ե՛յ, հողը զլիսուս տղէս զախեցի է, զիր-

նուց է էղել ընդուր գիշերները չե գագարմա հրթամ Գարան մամին բերեմ մէ աղօթէ ու գախն էլ չափէ, ըստ մամս մէ իրկունմ շալը զլխուն տառ ու ելաւ գնաց Մէ քիչ յետև մէ մէլ տեսնեմ կզկոտած, չորչուկ պատաւիմ հետ նես մտաւ, Նարսները Էն սհամբը տեղ շնին, պառաւը նստաւ, մամ էլ էկաւ ընձի գրը կըրաւ ու տարաւ ընդուր քովը, Պառաւը քաշեց ընձի գիրին տառ ու էրկու ձեռիս էլ ցուցամտիս ու բթամատիս մէջտեղերը սկսաւ սղմատել ու հետը քթի տակը վիրափաւը աղօթել Ըստից պնչերս սղմատեց, ես ըսկայ լալ, հմա պառաւը հէշ լացիս անկաջ չէր էնըմ, Յետև քամարս արձկեց միջքէս, մէ ճօմը դրաւ ձախ արմունկի տակը, մէկէլ ճօմը աջ ձեռով բռնեց ու ձախ ձեռը սկսաւ յիրեք հեղ քամրի վրայ գարձնել ես կողմ գարձնել էն կողմ Կայ ձեռի բոի թարափն էր գարձնմ քամրի վրայ, կայ երեսը ու հետն աղօթում Յիրեք հեղ էսպին էնդին գարձնել էն յետև, ձեռը վերցրաւ քամրի վրայ ու ամեն հեղին յիրեք անդամ ձեռը էս կողմ էն կողմ գարձրաւ, Ըստից վերցրաւ քամարը մէկ էլ չափեց ու ըստ, « Առու տեսար ինչքան է վախեցել տղին քամարը ըստ մատ կարձաւ, Դուք ո՞ւր էք մողնմ տղին մութ ու քեօշայ տեղերը, չիտեք որ գէշ վաղմն է, զաթի անիծած չարերը մէկ էս հասարակի տղնոցը, մէկ էլ նորապսակ թագորներուն գուշման են, Ըստից քամրի վրայ յիրեք օղ երաւ, տուաւ մամիս ու ըստ, « Քա, Մաքօ քուրի ջան, էսիկ տար հաւի թառէն կախէ, զիշերն էլ մող մնայ, առաւօտը րէ, յիրեք հեղ գետին զարկ, տղի սրտին զարկ, ու հետն էլ ամեն մէ զարկի լու ըստ, — Հաւը թառը, սիրալ փորը, հաւը թառը, սիրալ փորը, — Ըստից յիրեք օղն էլ գէմ երեսին արձկէ ու մէջքը կապէ քամարը, Բան չկայ, իմ աղօթքս բիրերի է, Աստուծով էն սհամբը անցնի կը տղի վերնուցը, էս ըստ պառաւն ու էլաւ մամիս հետ գնաց, էս ըստ պառաւն ու էլաւ մամիս հետ գնաց,

Հմա Գարան մամի ըստ բիրերիրը ընձի հըմար չէր, Քանի գնացի, Լաւնալու տեղը գէշըցայ, էման էղայ որ, քիթս ըստէիր, հոդիս կելնէր, էլի առաջուայ պէս տեղիս մէջը ճվճվում էի, շատ անդամ քամ քնածս տեղին ելնմ փախմամ էի, էլ մամ քամ քնածս տեղին ելնմ փախմամ էի, էլ մամ քովիս չէր հեռնեմ, միշտ նստած քովս ծածկմ էր, գրէս գանիս ես տաքութենէն քացոտմ, շորերս էն վրէս, Քանի ես տաքութենէն քացոտմ, շորերս էն վրէս, Քանի մամ մունիմ սուրբ գորութէնին թագի առաջնմ էր, տունը իողմ էր քցմ, էնիկ առելցնմ էր, տունը ինչ որ

կարպետ, ջեջիմ ըռաստ գար, բերմ, քցմ էր վլրէս ու ինքն էլ պոչերուն զայիմ նատում էր, որ չկրնամ վրէս բանայ,

Մէկ օրմ էլ էկ տեսակ ես քացոտմ վրէս բանմ էի, էնիկ թալքեար ծածկմ ու հետը գուրգուցնմ մասալներ ու հեքեամեներ պատմմ որ միտքս ընդուր հետ էղնի, շատ չիմանամ ցաւաւ որ մէմ էլ տեսնենք քաւորկին Անժառանը նես մտաւ, — Քա բարե քեզի, սանամէր Մաքօ, էկ ի՞նչ է էղել տղին հիւանդ է:

— Հա, քաւորկին ջան, շիտեմ ցարոց շօրշ շօփի է ըռաստ էկէ, ջրի վրայէ վախեցէ, տղէն հեշ չե գագարմ, միշտ ըսման տեղէն ելնմ, ճըլճը վուում, փախնում է:

Քաւորկին Անժառանը մօտեցաւ ընձի, ձեռը գրաւ զինուս ու ըստ «ույ», էս ինչ տաքէ գա սանամէր Մաքօ, էսիկ սրբէ է, Զես տեսնմ տղի ըռանզը, ինչդ է աշքերը բնէն դուս էկէ, ալլագ մալլագ էրէ, Մէ մաղմ բերէք, նետ բանամ, տեսուք:

— Եղի, Զարթար ճուաց մամն հօրօղբօրս կնկան, մէ մաղմ բեր, քաւորկին Անժառանը նետ պըտի բանայ, Հօրօղբօրս կնիկը ելաւ կարսներու վերնէն կախած ալլմադերէն մէկը իջեցրաւ, տուաւ քաւորկին Անժառանին, Քաւորկինը քովէս վէր կեցաւ, գնաց իրան հմար շնած տեղը, թանգրոջ զի թմբէի վրայ նստաւ, մէ միմ ուղեց, զարկաւ մաղի զանազին ու էրկու ձեռի ցուցամտներով մաղլ բռնեց ծնկներու տառջը,

— Դէ, սանամէր Մաքօ, հմի տղի մէրը պտի գայ, որ սուրբն որ սրտէն անցնում է, մոքի մէջը անունը տայ ու ձեռը զարկէ մաղին, Որ սրբի անունը տալու ժամանակ որ մաղը պտըտի, էս սրբէն էլ էղնի, ըստ քաւորկինը ու քթի տակն սկսաւ փսփսաւ,

Մէրս էկաւ մաղին մօտեցաւ, երեսը խաչակընքց, ուսուլով ձեռը գրաւ մաղին ու թարքեար յետ քաշեց, Մաղլ տեղին հեշ ժամ չեկաւ,

— Էդ սրբէն չէր, հմի ուրիշ սրբի անուն տուր, Մէրս մէ քիշմ կանդ առաւ ու էլի ձեռը գրաւ մաղին, էլի մաղը ժամ չեկաւ,

— Էդ էլ չէ, ուրիշ սրբի անուն տուր, էս անզամ մօրս ձեռը մաղին հասնելն ու մաղի պտուտ պտուտ գալը մէկ էղաւ,

— Այս, տեսար, սրբի, ես շըփի որ սրբէ է, Դէ, հմի ըստ, որ սրբի անունը տուրի,

Մէրս մօտեցաւ հօրօղբօրս աղջկան ու անկըն փափսաց, Հօրօղբօրս աղջկին էլ թէ,

— Մադի, լում է մնանիմ սուրբ գորութէնին թագի առաջնմ սրբի անունը տուրի,

Եդ ըսելուն քուլի ընտեղ էղնողները երեսները խաչակիցեցին, մամա էլ ձեռները վերև վերցրաւ ու լալակինելէն ըստաւ, «մեռնիմ» էն սուրբ զօրութենին, գեղէ գեղ սրբի սէր ման կուզամ», բարիկ սուբով, երես անկեալ գուռը կերթամ, հող ու մոփիրը կլիզեմ, մաքիլան Յակոյիս ջանսաղութէն տայ, Յիրեք գեղ է որ սրբի սէր ժողվեմ հերիք չէ, քաւորկին Անթառան, թէ օփտը գեղէ պտի էղնի.

— Յիրեք գեղն էլ հերիք է, մեռնիմ սուրբ զօրութենին, ղարուլ էկնէ. իրան այսն չէ որ, ցուրտ է, ձմեռ է, մատղչմէր է հարսը, գժուար է տնէ տուն, գեղէ գեղ ման գալ, ևս քանի օրը սարբէք, սանամօրս հետ գնացէք ման արէք, ինչ որ ժողովրէ՝ հաւկմէն, խունկէ, գոօշէ, թոփ էրէք, ընդոնց զնով մոմ առէք ու էդ մոմերը կանաչ ու կարմիր թելերով փաթմէք, մէ հեռու տուն զրաւ դրէք ինչարի ուխտ էրթալը, Աւխտ էրթլուս տղէն հեռաներդ առէք, մոմերն էլ էն անէն վերցրէք ու զնացէք, Հմա մոմերը նու տեսակ տուն պտի դրաւ զնէք, որ ձեր տներէն հեռու էղնի, էման որ ձեզնէն մարդ ու մուրդ չէրթայ ընդոնց դռները.

— Քօռ Պիպիննեց տները կեղնի, հարցրաւ մամա.

— Էնչի չէ. Պիպիննեց տները հեռու են,

— Ա՛չ, քաւորկին չան, էս տղէն էլ էղէ չեղէ, բալբալէն գլխէն անպակաս է, Մ'նք էլ որ ուսի ծափի պէս զրէն դողմ ննք, չունքի որ մօր մէ հատիկ մէկուճար տղէն է, Ինչ էնեմ տիաւ ազմ բաց զլուխ ալջիկ ունի, Հմա տիրոջ աշքը լուս, Ազջիկ զսմի գարու հաշիւ մը բանմէ. դըռուարն էն է, որ ծիլը գուս ելաւ, թէզմ հհասնի ու մուշտարին կուզայ դիմուն կկայնի—ծակ հըռւնը գետին կմնայ—ձեռնէդ քաշէ կտանի.

Իալուլ վաղմը էման նիշար զարուք էր որ, զօր գիշեր ձենը չէր կտրմ, միաբերան ճուար ու կը ճուար. ոնչ ծիծ էր ուտմ, ոնչ ջանի գալմ, ևս ու էն տեսան, ըստն թէ կոխ է էղել, Կոխն էլ որտեղից է—ըբա Զանաննեց պառաւը մեռաւ, տարան թաղելու տղէն քառսունքի մէջ էր, գուս չառնցինք թաղման ժամանակը, ընդից է էղել. Ըդից արծնելու հմար, մէ օրմ ես ամաններով ջուր առայ, մէմ էլ մէ շամամմի, տղէն էլ տուի հարսին ու ելանք գնացինք գերեզմնները, Եդ պառուի գերեզմնի վրայ տղին մէ լաւմ լողցինք, Հմա չեղդաւ, ընտից յետև տղէն էլի ջանի չեղկաւ.

Մէր էլ կպան թէ՝ Պետոյենց ու ձեր հարսը իրար հետ պարկան, քառսունքները խառնուաւ իրար, ընդուրը աղջիկ էր, ձերը տղայ ու ընդոնց Պիպանը՝ ալջիայ հէրը քառսունքը չմմած էկաւ

ձեր տունը, ընդից կոխ էղաւ տղէն, Ըդուր հմար էլ մեր հարսին մէ օրմ առայ դնացի ընդոնց տունը, ընդոնց աղջիկը մեր հարսի գիրկը տուի, մեր տղէն ընդոնց հարսի գիրկը ու նստան իրար կոնը կի զարկած ծիծ տուին էրեխանց, Ծիծ տուած վաղմն էլ ամէն մէկը իրանց կոտալաչկըներէն մէ ասեն հանեցին, իրար հետ փոխին, Ըդման չըսպտի էննն կոխ էղնողներուն:

— Հա՛, ըդման է, հմա էս բանն էլ որ էնէիք, լաւ էղնէր, Աերցնէիք մէ մոմմ, քցէիք տաք ջրի մէջ, էդ մոմը ջրի մէջը ինչ ջին ու ջանաւ վարի կերպարանք որ առնէր, կոխն էլ ընդից էղնէիք. Ըսնեք օձի պէս օլոր մօլոր եղաւ, օձէ է, ձիի պէս եղաւ, ձկէ է, չունքի որ մէննակ մատղաշը մատղըշէ կոխ չի էղնի, ուրիշ ջին ու ջանավարէ էլ էղնի, ամր ընդոնց էլ քառսունքը մատղչի քառսունքի հետ խառնուում է, Արդի էդ մոմը վերցնէիք, կտաւի մէջ փաթմէնիք ու տանէնիք օխտը ճամփի իրար հետ խառնուուծ տեղը թաղէիք, Էկիկ ամենէն հեքիմ էր կոխին,

— Քա վո՞վ գիտէր, քաւորկին ջան, դիտես էլի՛, ես ըդման բաներէն շատ շեմ՝ հասկնմ, ըստ մամա, էս անդամն էլ օղորմի հօրդ, ապրի որդիքդ,

— Ելշողաց.

— Ելի գու քու ոտքով էկար նետ բացիր, որ իմացանք սրբէ է, թէ չէ ում միաքն ու խայլն էր:

— Քա ի՞նչ էնէմ, սանամէր ջան, սիրս չի դիմանմ, որ ըդման իմանմ եմ թէ մէկի մէ տեղը ցաւմ է. տունը թողնմ, ենմ էրթմ եմ տեսութէն, Էսօր էլ տան էնել զնելլ թողել եմ հարսներու ումոււգին:

— Հոգուգ արբայութէն, Խօ գէշ շես էնմ Սաղ իքան հոգուգ տեղն ես մաքրմ, Մէկը մէկով, էրկուուն Նստծով, Մարդ որ մարդու գարդը չիմանյա, հոգսը չքաշէ, էլ վո՞վպտի իմանայ, Հարսներն էլ թող էննն, էննն սորվին, ամեն օր Խօ մնէք սաղ շենք մնայ, որ խարատ տանք, ըսենք. Հա՛, էս էս ման էրա, էն էման էրա, Էգուց զլիներս վեր դըրնք թէ չէ արդի քեալերուս պտի վերհա էննն թէ քանի որ սաղ էր, մեզի յառաջ չքաշեց, չըսպրիցըրաւ, որ հմի էլ մնէք կրնայինք էնէ, զնէ, տուն կառավարէ, Տիա, ես ամէն ինչ տուել եմ մենծ հարսիս, Զարթարի ձեռը, Մէննակ ես վրեները վերակացուի պէս ման եմ գալմ, բանմ էղնը է, խարատ տալմ եմ թէ չէ մնացած վաղմը ես իմ ժամփիս, աղօմքիս ու թոռներուս հետ եմ Բաղի բաղի սման արի, նստենք, խօրաթայ Էնինք սրտերս բացուի, օֆի, էս աշխրհէն ինչ պտի տաննք՝ թոփիմ ճերմակ կտաւ,

Ըտից յետև արդի խելի մամս ու քաւորկինը

կոտան խօրամթեցին, իրանց ջահել վաղթուայ բառները իրար թարիփ էրին ու գէջդանդէջ իրար թարի տուրին.

Անցաւ մէ քանի շարաթ, Հետը հետը լաւար գրի, Մամս մի ժամանակ ընձի իրան քովին չէր հետեցնմ. ժամ էրթար, դէրկըց տուն էրթար, ես թէ չէ տունը մնար, միշտ փեշը բոնած հետը ման էի գալմ. Մեր մէկէլ էրկիւէքը իմ վրայ նախնձմ էին ու շատ անգամ գալմ մամիս դիրկը ընկնմ ու ըսմ. մամի ջան, Յակոյին ուր որ տանմ ևս հետք, մեղ էլ տար. Մամս էլ շատ անգամ ծռկացընմ էր ընձի ու ըսմ. ուսո դուք չէք իմ տղէս, Յակոն է, ձեզի ընչի պտի տանեմ հետո, մէնակ Յակոյիս կտանեմ», Հմատ զէքը մամիս թարկը չէին տալմ. որը շինքն էր փաթթւում, որը ձեռները բռնմ պագմ, որն է կրծկալէն կախ ընկնմ. Արդզ մամս հեքիաթ ու մասալներ պտի ըսէր, կամ թէ մէ խաղմ սարքէր, որ տղոնց ձեռներէն եամէն թափ տար. Շատ անգամ մեզի իրան բոլորը սրով նստեցնմ էր, աջ ձեռներս քեաչի վայ գնել տալմ ու ըսմ. «Փսօն Փսօն, կաթ կուտես, մածուն կուտես, աւագ դռան պաջիկ կէնես» փս'թ». Ամէն մէ խօսքին իրան ձեռնը սրով մեր ձեռներու վրայ էր զարկմ. որի ձեռին որ գար վերջի խօսքը՝ փսթ, էինք կէզնէր մամի փիսիկը Արդզ իրար ինագու մամին ըռչվաթ կուտայինք (ըռչվաթն էր մէ մէ թուշ), որ թէզ իրան փիսիկ էնէ.

— Իսպի էլ էման մասիսարա մասալներ էր պատմմ, որ թուլանմ էինք ծըծաղալէն. Առ որն որ մամս տունը չէր էղնմ, ես թէ չէ իրա բանի հետ էր էղնմ, մեր օրը սկսմ էր. Առաւուը տեղանէս ելնելոն պէս տղայ, աղջիկ թօփ էին էնմ առանց երեսներս լուանալու, շորերս պայտով հագնելու, մօրերու քովին հետեցնելու հմար տանմ լցնմ էին հորթնոցը ու արդզ մէ մենձ քեարզանով էլ թանապուր բերմ առաջներս դնմ Աւտըմ ուտմ, վերջը՝ ապուրը պարպելուն մօտիկ կառում ու սկսմ էինք իրար տալ. Արդզ մէկը պէտք էր, որ ընդեղ սէյր էնէր մեր ծեծկուելուն, Քաշմ էինք ապրոս գուները, հասնմ իրար ու էնքան տալմ որ, որիս քիթն էր արլնմ, որիս պըռունկը, վրէս գլխաներս էլ որ տեղովը պարու էր էղնմ. արդզ ամէն մէկս մէ մօռըքի տակ, հորթի քով վեր ընկնմ էնքան էինք լալմ որ, ինչարի ձէներուս գալմ. էին հորթնոցի գուար բանմ ու տուն տանմ, թէ պապս ես մենձ հօրողբատանցէս մէկն էլ լուսեղ էր էղնմ ու մեզի էն հալի տեսնմ, նոր օրերս ծաղկմ էր՝ մէ լաւմ էլ էն էր ծեծկառում ու քիւրառ տակը պարկեցնմ. Հմա վէր օրն էլ որ մամս տունն էր էղնմ ու գլուխն առըկած, էլ մեր

քէփին քէփ չէր հասմ, Առաւուը տեղաներէս ելնելուն պէս սրով հազցնմ էր շորերս, երեսներս լուանմ ու մի մինտար էլ տանմ գոմի ողէն փռմ: Հօրողբօրս աղջկան, Հայկոյին էլ վրէներս վէրակէցու նշանակմ, որ չկուռինք իրար հետ.

Թանապուրն որ գալմ էր, ուտմ, փորերս կշտացնմ էինք, արդզ տղայ թաղումն ընկնմ էինք մալի մարքները գուգուլ ժամմ, զուռնայ շինմ. Մէկս չալմ էր, մէկս դամ բռնմ մէկն էլ մէ տախտակմ գտնմ գաւուլ շինմ ու զարկմ, տրնկի խաղողն էլ զամի կար. Եղջիկները գառարէն թընդիր էին էնմ ու վորը սուղմանց գաթա թիսմի որ գրդնակ էնմ, որն է գունդ կըմ. Ընդից իրանցէն մէկը հարս էին էնմ, զլուխը կապմ ու գովմ, Մենք էլ հարսնաւոր էինք էղնմ ու քէփ էնելով զուռնայ չալելով էրթմ էինք հարսին բերելու:

Էդ առասկ կալմ էինք ինչարի թնդրներու գառել իջնել քիւրսի գնելը, Քիւրսին որ գնմ էին, նոր էրթմ էինք տուն:

Հիշտեկ երկներն ու կիրակնօրները ժամէն որ գալմ էինք տուն, մամս սրբերու ու արդրներու պատմութենն էր էնմ:

— Մամի ջան, ըսաւ մէ հիշտեկ իրկունմ Սաքօն, երբոր ժամէն էկէ, մամիս քովը թօփ էինք էղել ժամն որ էնքան պատկերներ կան, ընդոնք քութիւնի սուրբ ե՞ն:

— Հա, բալա ջան, ըսաւ մամս, էն քութիւնի դրաղներունը սրբի պատկերն են, հմա էն մէշտեղի, հալիւոր, ձերմակ միրուքն որ նստած է, Հայր Աստծու պատկերն է:

Մամի ջան, էդ սուրբն ինչդ է որ, մարդէ, հարցրաւ պետոն:

— Հա, զուրբանդ էղնիմ, մարդէ, հմա պըզատուցներու պատկերն է պահմ, էղնմ է սուրբ:

— Էդ սուրբը որտեղ էն կենմ, հարցրաւ Կարօն:

— Երկնելը, Աստծու քովը, մէ մե նծ տունն է, շատ մենծ, մէջ փառած է խալի, դրած է սոկէ աթոռ, էդ աթոռի վրայ նստած է Քրիստոս Տէրը, արդրներն ու սրբերն էլ քովը բարե բանած կայշնած են:

— Մամի ջան, ամենէն գլխաւոր սուրբն ու արդարը ո՞րն է:

— Մեր Լուսաւորիչ պապն է, մեռնիմ ընդուր սուրբ զօրութէնին, ըսաւ մամս ու երեսը խաչակիւցնելը, ու մենք էլ հետը խաչակիւցնելը. Էնիկ միշտ մեզի համար բարեխօս է կայնած Քրիստոս Տիրոջ առաջը, հս տաղը ես ձեզի իրատ շեմ ու էլ որ ըսմ է—

Հուացաւ, լուացաւ

Հուն է քարին,

ծիսն է ծառին

չան է թառին

Աշխատատը վեր կաց բանին:

Երկնքի ղոները քաց են

Ռոկէ աթոռ դրած է,

Քրիստոս վրէն նատած է,

Հուատրիչ քովը կայնած է,

Միջաւորները լալմ' են,

Արդարները գրում' են:

—Մամի ջան, Լուսաւորիչ պապի պատմութէն էնեաւ երազը ընկաւ Սինօն:

—Էնեմ, զուրբան, ըստ մամն ու էս տեսակ սկսաւ,

Գրիգոր Լուսաւորիչ հերը, Անակը շատ մեղաւոր մարդ էր, Էնքան մեղաւոր որ, արունք բալի երաւ, Տրդատ թագաւորի հօրը սըպանեց:

—Մարդ սըպանելը շատ մէղք է, հարցրաւ Կարօն:

—Բրա ի՞նչ է, բալա ջան, ճանձն որ ճանձ է, պէտք է չկոխեն թէ մէղք է:

—Տեսար Կարօն ես որ ըսմ էի ճանձ սըպանելը մէղք է, մի ճանձերը բանէ սըպանէ, գուանկաջ չէիր էնման վրայ մտաւ Սինօն:

—Բրա Սաքօն որ քիւֆուր է է՞նմ: Ըստ Կարօն:

—Այս աման, քիւֆուր մէր էնէ, վրայ պըրծաւ մամն, տէրտէրը իմանայ, կուգայ լեզուներդ կարէ կը: Հաւ զէ հմի անկաջ երէք. Լուսաւորիչն որ իմացաւ թէ իրան հերը Տրդատ թագաւորի հօրը սըպանել է, թողաւ իրա տուն ու տեղը, գնաց Տրդատի քովը, որ նօքեար ու մշակ եղնի, դուշը լուղ էնէ, որ հօր մեղքերը քաւէ: Հմա էդ Տրդատը էն վաղթը շատ անաստուած ու կուապաշտ մարդ էր, ամեն մի հայ—քրիստոնեայ տեսնելուս, բանէր շարքէր ու տանջէր կը: Քանի որ չիտէր թէ Լուսաւորիչը հայ—քրիստոնեայ է, հետը լաւ էր, հմա երոր իմացաւ հայ—քրիստոնեայ ու իրան հօրը սըպանողի աղէն էղնելը, էն սհամը հրաման տուաւ իրան մարդկանցը, որ չարչարեն Լուսաւորչին, ԱՇ, Լուսահոգի Տէր՝ Մարկոսը պատմմ էր թէ, էման տասնչորս չարչարնք տուին որ իմանում է ջանը վրէն փշաքաղւում: մաղը զլիուն բիզ բիզ է էղնեն Բամ է բերմ թէժ կրակը փոմ էրն ու Լուսաւորչի շորերը հագէն հանմ: չպլազ դորմ էրն էդ կրակի վրայ, ընտից բերմ զլիի վրայ կախմ էրն ու տաներուն էնքան էնին զարկմ որ, արիւնը եղնում ուներէն սաղ ջամտաքը ծածկմ էր ու ես ինչ գի-

տեմ էս տեսակ տասնչորս չարչարնք տուին: Էդ չարչարնքները տալէն յետև էլի հերոը չիցաւ անդամ հրամանյեց, որ տանին քցեն Խոր-Արիապը Խոր-Արիապն էլ էն տեսակ մէ Խորունկ մաղարէմ է որ, հազար մի տեսակ ջին ու ջանավարներով օձերով ու վիշապներով լիին է, էման որ, ընկնողին էն սհամը կուլ են տալմ: Հմա Գրիգոր Լուսաւորչին որ քցին Խոր-Արիապը, Ասոծու հրամանով քուլի լիդ ջին ու ջանավարներն, օձերն ու վիշապները կառի պէս խելօք էկա՞ն Լուսաւորչի շորս բուլոր փաթթեցին ու որը սկսաւ ձեռները լիզել: որը զլուխը դրաւ Լուսաւորչի տաներու տակը պարկաւ, որն էլ աչքերը քցաւ Լուսաւորչի երեսին ու սկսաւ անթերթ աշել: Էդ տեսակ տասնչունգ տարի Լուսաւորիչը Խոր-Արիապի մէջ մնաց: Ասոծու հրամանով մէ պառաւ կնիկ օքը մի գարի հաց ու մէ աման էլ ջուր տանմ քեանդրով լիջնեմ էր Խոր-Արիապը ու Լուսաւորչին տալմ: Աէ օրմ էլ էդ պառաւը շատ ուշացաւ, իրա վաղթին չէկաւ: Յետև, յետև երոր էկաւ, Լուսաւորիչն հարցրաւ թէ նանէ, ընչի էսօր ուշացար: Պառաւն էլ թէ՝ էսօր Տրդատ թագաւորը էման մէ բանմ էրաւ որ, սաղ աշխարհը սէկրի էր կայնել—եռոտն էրկու կուս քարկօնել տուաւ: Լուսաւորիչն դգել լսաւ: «Հա էն խոզը իրա գիշութէնէն յետ չէ կեցել», էդ ըսելուն Տրդատը կառակեթը հեծած քաղթի բոլորը ման էր գալմ: Հմա խոզը էղնելն ու Տրդատի կառակեթն վերը լսենելն ու խոզութէնէն պրեցնէ: Աերջը վերջը էրալ էկաւ Տրդատի քուրովը թէ միննակ էն Գրիգորը, որ Տրդատը քցաւ Խոր-Արիապը կըսայ պըրծընէ: Կոր գնացին Լուսաւորչին հանին Խոր-Արիապէն բերին, որ խաչակներց Տրդատի վրայ ու թարքեար գարձաւ, հմա անկջի մէկը էլի խոզի անկաջ թողաւ, որ նշան էղնի: Պատմմ են թէ էջ միհածնայ գանքի մէջ քաշած է Տրդատի պատկերն ու անկջի մէկն էլ խոզի անկաջ է:

—Տրդատն որ լաւցաւ, ըրա էլ հայ—քրիստոնէրուն չչարչարից, հարցրաւ Սոքօն:

—Ել, ընդից յետև արդդ աստուածալիք քրիստոնեայ մարդ եղաւ, հետու տեղանէն էրթում քար էր շալկում բերում: Էջմիածնայ վանքը շինում: Որն ըսմ է թէ էջմիածնայ վանքի հիմը Տրդատը մատներով փորմ էր, իրա կնիկն ու քորը հողը փեշերով թափիմ էլին, որն էլ թէ Լուսաւորիչն ու Տրդատը էջմիածնայ վանքը ծովի վրայ շնիւցին

ու նշանի հմար վանքի մէջը մէ ծակ թաղին ջրհորի պէս: Հմբ որ մարդ աշխ է եղ ծակէն մէ քիչ պըլ պօտում է տակը ծովի ջռւրը, Էնքան որ վանքը բանձր է շինած ծովին:

— Լուսաւորիչն որ Տրդատի քովը Էնքան զուլուզ էրաւ, իրա հօր մեղքերուն թողութեն էղաւ,

— Ըրա չէղաւ, բալա ջան, ամէն մի բարի աւշադ իրա հօրն ու մօք հոգուն շահ է: Ըստ են թէ նոր էղած տղէն, որ կոքելուս մեռնի մէջ մեռնի, էղիկ ամննէն օգուտ է, չունքի որ աղունիկ էղիկ, թանի կորթայ երկինքը ու հէրն ու մէրը էն դշէն նեղ տեղ ընկած վաղմը կուգայ կազատէ:

— Մամի ջան, բամ են թէ մարդ որ մեռնի մաղէ կարծնջէ պատի անցնի: Էղիկ դօրթ է:

— Հա:

— Ըրա էդ մաղէ կարմունջը չի կտրի:

— Թէ որ արդար է, չի կտրի ու թեթև կանցնի, թէ որ մեղաւոր է, չի կրնայ անցնի ու վէր կընկի:

— Է, որ վէր ընկաւ ի՞նչ կէնեն:

— Կը գնեն կշեռքը, մեղքերը կը կշռեն ու կը տանեն իրա տեղը: Ընդեղ ամեն մարդու իրան գործի գեօրա տեղ է շինած: Լաւ մարդ է, ես գույշն լաւութէն է էրէ, լաւ տեղ ունի էն դույշն, չար մարդ է, չարութէն է էրէ, գէշ տեղ ունի:

— Զար մարդու տեղն ի՞նչդ է որ:

— Կողէ կարասն է, ի՞նչդ է, տանեն կը քցեն կողէ կարասը, մէ խուփմ էլ կարսի բէյնին կը գնեն ու ընդեղ վասի կէրէցի, կը մնայ, ոնչ մեռնելիք կէղնի, ոնչ պրճնելիք:

— Լուսաւորիչ պապի հօր տեղն ի՞նչդ է էղել:

— Բուաջ Լուսաւորչի հօր աշքի մէջն է կոտոշ կոխած էղել իրա մեղքերու հմար: Հմա մէկ անգամ Քրիստոս Տէրը Լուսաւորչի հետ մեղաւորներու տեղերէն անցնելիս կուգայ Անտիկ տեղն ու կէնէ թէ անցնի, հմա կը տեսնի, որ Լուսաւորիչը յետ կախ ընկաւ ու սկսաւ խեղճ խեղճ հօրն աշել: Ըգեղ Քրիստոս Տէրը կըսէ: «Հա: ի՞նչ է, հօրդ տեսար, սիրտ ցաւաց, որ ըգման է, մող կոտոշը աշքի միջէն ելնի, անկիջ մէջը դրուի ու եզ տեսակ էլ էղնի, որ մէ քիչը կը դմիջանայ ընակը ցաւէն:»



## ՄԱՆՐԱԼՈՒՐՔ.

Միջազգայի համաժողովները (congress)՝ Ամստերդամ վերջին ամիսը կարող է գիտնական համաժողովների ամեն կոչունել սյու տարի Օգոստոսի լնժացրում տեղի ունեցան հետեւալ համաժողովները:  
1. Միջնիներում հոգեքանների համաժողով,  
2. Փարիզում քիմիկոններինը, • Ժընէվում գուցերական անինիքական լնկերութիւններինը: Հոգեքանների համաժողովների 500 գիտնականները հոգեքանական այս միջազգային ժողովն հաշուով երրորդն է: բասարական նախարար Գոն Լանդմանն ողջունելով հոգեքաններին ասաց: «Եղայ ունիմ որ հոգեքանական համաժողովները պիտի օժանդակեն բառնալու այն միջ վասնզը, որ ծագում է մի քանի հոգեքանական թիւր տեսութիւններից: Համազուած եմ որ համաժողովները պիտի հաստատեն մարդու իւր արարքների համար պատափանատու լինելու:»

Նշանաւոր գեկուցազրերի մէջ յիշաստկելու արժանի են ֆարիզեցի հոգեքանն Շառլ Ռիշէի ճառը, sur la doubleur\* (Վշի մասին): Հալլէի պրօֆէտոր ֆ. Լիստի ճառը՝ պատճապարու հաստատվեան մասին» եւ դրկտոր Պրայէրի մանկան հոգեքանութիւն: բանախուութիւնը:

Գործադրական քիմիայի համաժողովն տեղի ունեցաւ ֆարիզում նախագանձեանք յոցտնի քիմիկոս եւ քաղաքական գործիչ թերտուլոյի: Շատ նշանաւոր էր զիտանական նախագանձի ճառը, որ նա հիմքն եւ ամփոփ կերպի նկարագրեց քիմիայի աժմեան վիճակն եւ տուած սպազայի յոցտնը: Վերջին կիսադարեայ շրջանում քիմիայի յառաջադիմութիւնը նկարագրելուց յետոյ, շիշտեց այն կատարելազործութիւնը, որ քիմիան մոցքել է մետաղաքանութեան մէջ, նա միանգամայն յայտնեց իր հաստատ համոզումը, որ շուառվ կը յաջողի միզ օգաղնացութիւնը եւ երկարօրէն խօսեց այն քաղաքական կանաչ անունում երթէք, նա անդադար յառաջ է դիմում ամէնքին դէսի գործութիւնը է դրդում: Նա շատ քան հասարակական կենացում արդէն փոփոխել է եւ շատ քան էլ պիտի փոփոխէ, երբ ի շնորհ ու